

Արձանագրություն N5

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

28.12.2015թ. նիստի

Օրակարգ

1. 2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում /ներկայացնող՝ որակի ապահովման հանձնաժողով/:
2. Բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
3. Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքը:
4. Ֆակուլտետում թարգմանչական ուսուցման կատարելագործման հարցի քննարկում:
5. Հայցորդների ատեստավորում:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 41-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի անդամները /Պարոնյան, Հարությունյան, Կարապետյան և այլք/ ամփոփ ձևով ներկայացրեցին յուրաքանչյուր ամբիոնի 2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքները և ընդհանուր առմամբ իրենց համաձայնությունը հայտնեցին ուսանողների ներկայացրած կարծիքների հետ՝ պատկերն հիմնականում օբյեկտիվ է: Նրանք նաև նշեցին, որ երբեմն-երբեմն ուսանողը կարող է անարդարացիորեն ներկայացնել իր ոչ օբյեկտիվ կարծիքը: Ֆակուլտետի ղեկանը նշեց, որ ուսանողների բոլոր առաջարկները, դիտողությունները հաշվի են առնվում, քննարկվում, որն էլ վկայում է ուսուցման ուսանողակենտրոն մեթոդաբանության կիրառման մասին: Արդյունքում ֆակուլտետում նկատվում է որակի ապահովման դրական տեղաշարժ: Առաջարկություններ եղան քննարկումներ անցկացնել ցածր միավորներ ունեցող դասախոսների հետ, վերանայել գնահատման չափանիշները, ֆակուլտետում տեղադրել արկղ, որի մեջ ուսանողները կտեղադրեն իրենց առաջարկները, բողոքները, որոնց քննարկումը հենց այդ պահին հնարավորություն կտա դասախոսին իրեն վերաբերող խնդիրները շտկել նախքան սոց. հարցման անցկացումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2014-2015 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքներն ընդունելի գիտություն, հաստատել որակի ապահովման հանձնաժողովի նոր կազմը /Պարոնյան՝ նախագահ, Առաքելյան, Գաբրիելյան, Մուրադյան, Բագրատունյան՝ անդամներ/:

2. ԼՍԵՑԻՆ՝

Նշվեց, որ բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներն ընթանում են նորմալ, Հ. Բաղդասարյանն ավելացրեց, որ իսպաներենի ու իտալերենի բաժնի ուսանողները դպրոցներում չեն կարող անցկացնել պրակտիկան, քանի որ մեր դպրոցներում լայնորեն չեն ուսուցանվում նշված լեզուները, ուստի ուսանողները ստիպված են բավարարվել միայն համալսարանական պրակտիկայով:

3. ԼՍԵՑԻՆ՝

Ամբիոնի վարիչները զեկուցեցին, որ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքներն ընթանում են նորմալ հունով և ըստ սահմանված գրաֆիկի, մինչև այժմ ոչ մի խնդիր չի առաջացել:

4. ԼՍԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի աշխատանքների բարելավման, ուսուցման առավել ճիշտ և արդյունավետ մեթոդիկայի կիրառման և համապատասխամ արդյունքների ստացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Նշված խնդրի լուծման բազմաթիվ առաջարկներ հնչեցին: Մասնավորապես նշվեց, որ պետք է տեղաշարժի հնարավորություն տալ մասնագիտական մյուս բաժինների լավագույն ուսանողներին թարգմանչական բաժին տեղափոխվելու, ինչպես նաև ընձեռնել հակառակ տեղաշարժի հնարավորություն, ներմուծել համաժամանակյա /սինխրոն/ թարգմանության դասընթաց, վերանայել թարգմանչական բաժնի ուսումնական պլանները, կազմել և ծանրաբեռնվածության մեջ մտցնել թարգմանիչների համար նախատեսված պարտադիր գրականության ցանկ, անհրաժեշտության դեպքում հրավիրել մասնագետների /Գասպարյան/: Թարգմանչական բաժնում լավագույն ուսանողների ներգրավվածությունը ապահովելու համար ուսանողի հետ նախօրոք պայմանագիր կնքել, ըստ որի ոչ բավարար առաջադիմության համար նա կարողանա 3-րդ կուրսից տեղափոխվել այլ բաժին, և հակառակը՝ մյուս մասնագիտական բաժինների լավագույն ուսանողներին հնարավորություն տալ տեղափոխվել թարգմանչական բաժին /Հարությունյան/: Դասախոսական կազմը համալրել արտերկրում պատրաստված նոր մասնագետներով, ինչպես նաև ներգրավել այլ ֆակուլտետների թարգմանչական պատրաստվածությամբ աչքի ընկնող դասախոսների /Պարոնյան/: 3-րդ և 4-րդ կուրսերում առանձնացնել տեխնիկական և գեղարվեստական հակում ունեցող ուսանողներին /Ապրեսյան/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- Վերանայել թարգմանչական բաժնի ուսալանները՝ ներմուծելով մասնագիտական առարկաները 3-րդ կուրսից և ավելացնելով հայոց լեզվի ժամաքանակը:
- Լեզու և գրականություն բաժին ընդունված լավագույն ուսանողներին առաջարկել 3-րդ կուրսից փոխել բաժինը և տեղափոխվել թարգմանչական բաժին:
- Կազմակերպել դասախոսների վերապատրաստում համաժամանակյա /սինխրոն/ թարգմանության դասընթաց վարելու նպատակով:
- Մշակել անհրաժեշտ գրականության ցանկ /հայագիտություն, արտասահմանյան գրականություն/ հայերեն թարգմանելու համար՝ հնարավորության դեպքում ներառելով այդ աշխատանքին հատկացվող ժամերը ծանրաբեռնվածության մեջ:
- Արտերկրից հրավիրել համապատասխան մասնագետներ՝ թարգմանական տարբեր խնդիրների վերաբերյալ սեմինարներ, դասընթացներ, վերապատրաստումներ անցկացնելու համար:

- Թարգմանչական բաժնի դասախոսների համար կազմակերպել մասնագիտական վերապատրաստում:
- Ստեղծել թարգմանչական խումբ /նաև վճարովի ծառայություններ իրականացնելու համար/՝ խմբի աշխատանքներում ներգրավելով ֆակուլտետի այլ ամբիոնների դասախոսներին և ուսանողներին: Մասնագիտական խորհրդատվություն իրականացնելու համար այդ խմբի աշխատանքներում ներգրավել նաև այլ ֆակուլտետների դասախոսներին:
- Որպես նոր մասնագիտացում ներմուծել միջգիտակարգային մագիստրոսական ծրագիր՝ էքսկուրսավար-թարգմանիչներ պատրաստելու նպատակով:
- Լրացուցիչ քննարկումներ անցկացնել նեղ աշխատանքային խմբով, մի բերել բոլոր առաջարկությունները, կազմել առաջարկությունների վերջնական ցանկ և ներկայացնել այն ԵՊՀ ռեկտորին:

5. ԼՍԵՑԻՆ՝

Զեկուցվեց, ար հայցորդների ատեստավորումը խոչընդոտող որևէ խնդիր չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ատեստավորել ֆակուլտետի նշված գործընթացը դեռևս չանցած հայցորդներին:

6. ԸՆԹԱՅԻՎ ՀԱՐՑԵՐ

Որոշոցին՝

- Վերաձևակերպել Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Մարինե Անդրասյանի թեկնածուական ատենախոսության թեման:
- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի ասիստենտ Արփի Պապոյանի դասախոսությունների շարքը:
- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Վահե Արսենյանի դասախոսությունների շարքը:
- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Անահիտ Շահմուրադյանի մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Անուշ Սեդրակյանի դասախոսությունների շարքը:
- Տպագրության երաշխավորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոսներ Ա. Մարդանյանի, Ա. Հովհաննիսյանի, Մ. Աղբալյանի ուսումնական ձեռնարկը:
- Հաստատել Արցախի պետական համալսարանի ավագ դասախոս Նարինե Մինասյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆ. Մ. Գասպարյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

28 դեկտեմբերի 2015 թ.